

Գործողութեան յարմարութիւն կը ներկայացնեն օրանկութեանն ու չէմփանցէն Աստուծոյ՝ որսորդութիւնը դժուար է։ Նապղուխ կապիկը, որ կ'ապրի Ափրիկէի մէջ, աւելի յարգի է իր գիւրիին որսորդութեան պատճառով։ Անոնք բազմածին են, շուտ կ'աճին ու կը բազմանան, խումբով կը պտըտին։ Սակայն որսորդութիւնէն աւելի, շատեր կ'աշխատին կապիկի զաղութներ՝ հաստատելով՝ կապիկ բազմացնել։

Քանի մը խօսք գործողութեան մասին։ Ամորձիքները երբեք ամբողջութեամբ չեն տնկուիր, այլ՝ կտորներու կը վերածուին։ Որովհետեւ մարմինը չի կրնար մէկ անգամէն սնուցանել օտար խոշոր գեղձ մը, ինչպէս պարտիզպաններն ալ, փոխանակ խոշոր ճիւղերու, կը պատուաստեն միայն պզտիկ ծիւեր։ Ոմանք ամորձիքները կը տնկեն մորթին տակ մարմինին ամէն կողմը, առանց ընտրութեան։ Վորոնոֆ կը բողբէ, եւ կը թելադրէ ամորձիքը տնկել իր տեղը, չէ՞ որ սաղմնաբանութիւնը կը սորվեցնէ թէ ամորձիքը նախապէս որովայնին մէջ երեւան գալով իջած է ամէնէն յարմար տեղը, հոն ուր կը գտնուի արբունքի շրջանին։ Բայց ո՞ր շրջանին քաղել ամորձիքը։ Ընդհանրապէս արբունքի հասնելու շրջանն է յարմարը, երբ այդ գործարանը կը սկսի սերմ պատրաստել։

Գործողութեան համար, անհրաժեշտ է երկու վիրաբույժ, մէկը աշխատելու համար մարդուն վրայ, — Վորոնոֆ կը յանձնարարէ չքնացնել մարդը, այլ անզգայացնել միայն գործողութեան յարմար տեղը, — միւսը՝ կապիկին վրայ։ Դժուար է քնացնել կապիկը։ Երբեք չի պառկիր սեղանի վրայ, և կարելի չէ զսպել։ Ուստի պատրաստուած են երկաթէ սնտուկներ, ուր քլորոֆորմով կարելի է քնացնել զանոնք։

Գործողութեան նկարագրութիւնը աւելորդ է «Բուժանք»ի ընթերցողներուն համար։ Յաջորդով պիտի խօսիմ երիտասարդացման տարբեր մեթոտներու մասին, զորս կը ջատագովեն ուրիշ փրօֆէսօրներ։

ԲԺ. Շ. ԱՅՎԱԶԵԱՆ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԸ. — Այս ամառ տոքթ. Վորոնոֆ Անգլիա գացած էր։ Քէմպրիճի համալսարանին մէջ դասախօսութիւն մը տուաւ իր «գիւտին» շուրջ։ Անգլիացի բժիշկ մը բողբեց հրապարակաւ թէ «կապիկին անգթութիւնն ու կիրքը կը փոխանցուի մարդոց»։ Նորոյիւ Վորոնոֆի փորձերուն, Պէրլըրտ Շո, անգլիացի գրագէտը, յանուն կապիկներուն, բաց-նամակ մը գրեց տոքթէօրին։

— Եւնք, կապիկներս, աշխարհի ամէնէն խելօք ցեղն ենք, որ մեր ամորձիքները փոխ կուտանք մարդոցը։ Տեսած էք կապիկ մը, որ մարդոց ամորձիքները փրցնէ կապիկ մը պատուաստելու համար։ Անգթութիւնն ու կիրքը յատկանիշներն են մարդոց։ Միթէ վերջին ընդհ. պատերազմը կապիկներուն գործն էր թէ մարդոց, պատերազմը կապիկի՞ գործ է թէ մարդու։ Մարդը աւելի վայրենի է քան կապիկը, կիրքի աւելի սիրահար՝ քան դժոխքի բոլոր մեղաւորները։